RGS-02,N1401
18.02.19

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի

ղեկավար, գլխավոր քարտուղար՝ Տիգրան Գալստյանին

Հարգելի պարոն Գալստյան,

«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) և ՀՀ Ազգային ժողովի միջև 18/01/2019թ.-ին կնքվել է Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման թիվ N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-19/1 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): «Գարանտ Ասիստանս» ՍՊԸ, որը հանդիսանում է «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ գործակալ և իրականացնում է ապահովագրական գործունեություն՝ ապահովագրական գործակալության պայմանագրի հիման վրա (հիմքերը կցվում են)՝ կնքել է Ընկերության անունից ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության Պայմանագիր, սակայն «Գարանտ Ասիստանս» ՍՊԸ էլեկտրոնային հաշիվներ դուրս չի գրում, ուստի խնդրում ենք մեր միջև 18/01/2019թ.-ին կնքված թիվ N ՀՀ ԱԺ ՄԱԾՁԲ-19/1 պայմանագրի շրջանակներում վճարումներ կատարելու նպատակով՝ հիմք ընդունել Ընկերության կողմից 13/02/2019թ.-ին Բ7192625764 համարի դուրս գրված հարկային հաշիվը, որը կից ներկայացվում է:

«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

Գործադիր տնօրեն՝ Գագիկ Գրիգորյան

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
13	Փետրվար	2019 թ.		Բ	7192625764
[4] Մատուցման ամսաթիվը					
1	Հունվար	2019 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագրիի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	1 Հունվար, 2019 թ.	SN306822

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	2	5	8	9	5	8	1		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	2	5	8	9	5	8	1	/	1

[10] Անվանումը	ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)	
[11] Բանկային տվյալները	Ամերիա Բանկ ՓԲԸ	N 1570003731650100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ Հյուսիսային Պող. 1	
[13] Լրացուցիչ տվյալներ		

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	0	0	0	8	5	1	9
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								

[16] Անվանումը	<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ>> Պետական կառավարչական հիմնարկ	
[17] Բանկային տվյալները	Դեպոզիտարիա	N 900011020089
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ Բաղրամյան 19	
[19] Լրացուցիչ տվյալներ		
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն	
	Լիազորագիր Համար	
	Լիազորագիր Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Ը/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Ապահովագրության պայմանագիր	հատ	1	2869000		2869000
Ընդամենը						2869000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)` ZAKARYAN ARMINE 5709690198

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող`

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

13/02/2019 11:12:10

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ԱԳԾ/403

ք. Երևան **«12» փետրվարի 2013թ.**

«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ապահովագրող)՝ ի դեմս գործադիր տնօրեն Գագիկ Գրիգորյանի, որը գործում է Ապահովագրողի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«ԳԱՐԱՆՏ ԱՍԻՍՏԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Գործակալ)՝ ի դեմս տնօրեն Լիա Անդրիասյանի, որը գործում է Գործակալի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

հաշվի առնելով, որ

Ապահովագրողը Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է ոչ կյանքի ապահովագրության գործունեություն՝ համաձայն թիվ ԱՊՈ 0009 լիցենզիայի և այն, որ Գործակալը հանդիսանալով Կենտրոնական բանկի ապահովագրական միջնորդների ռեգիստրում գրանցված իրավաբանական անձ, իրավասու է Հայաստանի Հանրապետությունում իրականացնել ապահովագրական գործակալի գործունեություն.

Ելնելով այն հանգամանքից, որ

Կենտրոնական բանկը «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն նախնական թույլտվություն է տվել Կողմերի միջև կնքված Գործառույթների պատվիրակման պայմանագրի հիման վրա Ապահովագրողի կողմից «ապահովագրական միջնորդային գործունեության հետ կապված ապահովագրական գործակալության ծառայություններ» գործառույթի պատվիրակմանը Գործակալին,

Կողմերը համաձայնվեցին հետևյալի շուրջ

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Ապահովագրողը հանձնարարում է Գործակալին իրականացնել հետևյալ գործառույթները՝

1.1.1. Ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի կնքման նախապատրաստական աշխատանքների, այդ թվում՝ նաև ապահովագրական խորհրդատվության իրականացում, Ապահովագրողի անունից հնարավոր ապահովադիրներին Ապահովագրողի և Ապահովագրողի գործունեությանը վերաբերող նյութերի տրամադրում, պարզաբանում, նկարագրություն:

1.1.2. Ապահովադիրների և Ապահովագրողի միջև ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի կնքման կազմակերպում, այդ թվում՝ Ապահովագրողի անունից հնարավոր ապահովադիրներին ապահովագրության առաջարկների ներկայացում և Հաճախորդների հետ Ապահովագրողի անունից Ապահովագրության պայմանագրի/վկայագրի կնքման ուղղությամբ բանակցությունների վարում, ապահովագրության պայմանագրերի կատարման օժանդակում, ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի Ապահովագրողի անունից ստորագրում ներառյալ ապահովագրավճարների հավաքման իրականացում կամ վերահսկում:

1.2. Սույն պայմանագրով Գործակալը իրականացնում է 1.1. կետում նշված գործառույթները, իսկ Ապահովագրողը դրա դիմաց Գործակալին վճարում է միջնորդավճարներ սույն պայմանագրով սահմանված չափով և կարգով:

1.3. Ապահովագրական գործակալական գործունեությունն իրականացվում է ոչ կյանքի ապահովագրության տեսակի հետևյալ դասերով կամ դրանց խմբերով՝

- ցամաքային տրանսպորտի ապահովագրություն /բացառությամբ երկաթուղային/,
- դժբախտ պատահարներից ապահովագրություն,
- հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն,
- փոխադրվող գույքի /բեռների/ ապահովագրություն,
- գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն,
- ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների /նաև՝ բեռնափոխադրող/ օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,
- ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն,
- աջակցության ապահովագրություն,
- առողջության ապահովագրություն,
- ֆինանսական վնասների ապահովագրություն,
- օդանավերի ապահովագրություն, որը ծածկում է օդանավերին պատճառված վնասները եւ կորուստները,
- օդանավերի (նաեւ՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն:

1.4.Ապահովագրության յուրաքանչյուր դասի /դասերի խմբի/ համար սակագները զետեղված են Ապահովագրողի www.RGS.am պաշտոնական ինտերնետային կայքում:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ/ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՁԵՎԱԹՂԹԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

2.1. Պայմանագրի 1.3. կետով սահմանված ապահովագրության յուրաքանչյուր դասի կամ դրանց խմբերի համար Ապահովագրողը Գործակալին տրամադրում է ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի համարակալված ձևաթղթեր, ԱՊՊԱ կտրոններ (այսուհետ՝ Ձևաթղթեր), որոնք պարունակում են Գործակալի՝ Ապահովագրողի անունից ստորագրությունը, և որոնց Ապահովադիր, ապահովագրության օբյեկտ (ներառյալ դրա հետ կապված այլ տեղեկատվությունը), ապահովագրված անձ (առկայության դեպքում), ապահովագրավճար, ապահովագրության սակագներ, չհատուցվող գումար, դրա տեսակը, ապահովագրության ժամկետ և յուրաքանչյուր ապահովագրության պայմանագրի/վկայագրի՝ ՀՀ օրենսդրությամբ պարտադիր նշման ենթակա այլ վավերապայմանները, որոնք լրացված չեն և ենթակա են լրացման Գործակալի կողմից:

2.2. Ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի ձևաթղթերի տրամադրումը Ապահովագրողի կողմից Գործակալին, ինչպես նաև Գործակալի կողմից կնքված ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի բնօրինակները, փչացված, վնասված կամ խոտանված ձևաթղթերի հանձնումը Ապահովագրողին իրականացվում է հանձնման-ընդունման ակտի հիման վրա: Գործակալը պարտավոր է ապահովել իրեն հանձնված փաստաթղթերի հուսալի պահպանությունը (չթողնել առանց հսկողության, չտրամադրել այլ անձանց ի պահ, պահպանել ապահով վայրում):

2.3. Ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի բնօրինակների եւ դրանց ձեւաթղթերի հաշվառումն իրականացվում է Ապահովագրողի կողմից հաստատված եւ Գործակալին տրամադրված «Իրավաբանական անձ եւ անհատ ձեռնարկատեր ապահովագրական գործակալների գործունեության աշխատանքային հրահանգով» /վերջինիս փոփոխություններով եւ լրացումներով, նոր խմբագրություններով/ նախատեսված կարգով: Աշխատանքային հրահանգները, դրանց փոփոխությունները, լրացումներն ու նոր խմբագրությունները Ապահովագրողի կողմից հաստատվելուց հետո անմիջապես տրամադրվում են Գործակալին եւ պարտադիր են Գործակալի կողմից կատարման համար:

2.4. Գործակալի կողմից ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի ձևաթղթերի կորստի դեպքում վերջինս պարտավորվում է այդ մասին անհապաղ՝ ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում, գրավոր տեղեկացնել Ապահովագրողին: Գործակալի կողմից Ապահովագրողին այդ մասին տեղեկացման պահից կորած ձևաթղթերը կհամարվեն անվավեր:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ/ՎԿԱՅԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

3.1. Սույն պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով, սույն պայմանագրի շրջանակներում ապահովագրության պայմանագրի/վկայագրի կնքումը իրականացվում է ՀՀ Օրենսդրության, սույն Պայմանագրի և Ապահովագրողի կողմից սահմանված և Գործակալին տրամադրված համապատասխան ներքին իրավական ակտերի համաձայն:

3.2. Ապահովագրողի ապահովագրության պայմանագրի/վկայագրի կնքումը իրականացվում է հետևյալ կերպ.

3.2.1. Գործակալն Ապահովագրողի անունից ապահովադիրների կնքմանն է ներկայացնում Ապահովագրողի ապահովագրության պայմանագրերը՝ յուրաքանչյուր պայմանագիրը 2 օրինակից, որոնցից մեկ օրինակը տրամադրվում է Ապահովադրին, իսկ մյուսն Ապահովագրողին՝ Պայմանագրով սահմանված կարգով: Սույն պայմանագրի հիման վրա կնքված յուրաքանչյուր ապահովագրության պայմանագրի/վկայագրի վրա դրվում է Գործակալի և Ապահովադրի ստորագրությունները և/կամ կնիքները (առկայության դեպքում):

3.2.2. Ապահովադրից ստորագրված /կնքված/ ապահովագրության պայմանագրի/վկայագրի Ապահովագրողի օրինակը կնքելուց հետո 1 (մեկ) օրվա ընթացքում, Գործակալը, Կողմերի համար որևէ հասանելի եղանակով (համակարգչային օն-լայն ծրագրի, էլեկտրոնային փոստի, հեռախոսի, ֆաքսի, կապի այլ տեսակների միջոցով կամ անմիջապես պայմանագրի/վկայագրի փաստաթղթի Պայմանագրի 2.2. կետով սահմանված կարգով Ապահովագրողին հանձնելու միջոցով) պարտավոր է տեղեկացնել Ապահովագրողին՝ կնքված ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի էական պայմանների վերաբերյալ, այդ թվում՝ ապահովագրության օբյեկտի, ապահովագրական գումարի, ապահովագրավճարի և Ապահովագրողի կողմից պահանջվող այլ պայմանների վերաբերյալ, կամ վերոհիշյալ եղանակներից մեկով տրամադրվում է ապահովագրության պայմանագրի/վկայագրի պատճենը:

3.2.3. Գործակալի միջնորդությամբ կնքված ապահովագրության պայմանագրերի գծով ապահովագրավճարների հավաքագրումը կարող է իրականացվել հետևյալ եղանակներով՝

- ապահովագրավճարներն ապահովադիրների կողմից վճարվում են Ապահովագրողին՝ Ապահովագրողի գործունեության վայրում տեղակայված դրամարկղ կամ դրամապահոց,
- ապահովագրավճարներն ապահովադիրների կողմից փոխանցվում են Ապահովագրողի հաշվարկային հաշվին,
- ապահովագրավճարներն ապահովադիրների կողմից կանխիկ վճարվում են Գործակալին:

3.2.4. Ապահովագրավճարների վճարման գործընթացը իրականացվում է Ապահովագրողի կողմից հաստատված եւ Գործակալին տրամադրված աշխատանքային հրահանգներով:

3.3. Կողմերի միջև հաշվարկներն իրականացվում են երկկողմանի ստորագրված փոխադարձ հաշվարկների ակտերի հիման վրա:

3.4. Գործակալը կարող է մեկ Պայմանագրով հավաքագրել առավելագույնը 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ ապահովագրավճար:

3.5. Գործակալության իրականացման ընթացքում Գործակալն ապահովադիրներին տրամադրում է Ապահովագրողի կողմից Գործակալին հանձնված Ապահովագրողի գործունեությանը վերաբերող նյութերը՝ անհրաժեշտության դեպքում ապահովադիրներին պարզաբանելով դրանց բովանդակությունը:

3.6. Գործակալության իրականացման արդյունավետության բարձրացման համար Ապահովագրողը կարող է իր հաշվին իրականցնել Գործակալի աշխատակիցների վերապատրաստումը, ինչը ձևակերպվում է Կողմերի միջև կնքված լրացուցիչ գրավոր համաձայնությամբ:

4.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1.Գործակալը պարտավոր է՝

4.1.1 Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում Ապահովագրողին փոխանցել Ապահովագրության պայմանագրերի համաձայն ստացված ապահովագրավճարները,

4.1.2 Ապահովագրողի պահանջով վերջինիս ներկայացնել Ապահովագրության պայմանագրերի վերաբերյալ իր մոտ առկա ամբողջ տեղեկատվությունը,
4.1.3 իրեն հայտնի դառնալու դեպքում, Ապահովագրողին անհապաղ տեղեկացնել Ապահովագրության պայմանագրերի համաձայն ապահովագրական հատուցում վճարելու պարտավորություն առաջացնող ապահովագրական պատահարների տեղի ունենալու վերաբերյալ,
4.1.4 կնքված Ապահովագրության պայմանագրերի վերաբերյալ տեղեկացնել Ապահովագրողին՝ սույն պայմանագրով սահմանված կարգով,
4.1.5 պատշաճ կերպով պահպանել Ապահովագրողի կողմից տրամադրված Ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի ձևաթղթերն ու բնօրինակները,
4.1.6 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ և ավել ապահովագրավճար կամ 30 000 000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ և ավել ապահովագրական գումար նախատեսող Ապահովագրության պայմանագրեր/վկայագրեր կնքելու դեպքում նախօրոք ստանալ Ապահովագրողի համաձայնությունը,
4.1.7 անվերապահորեն և անհետկանչելի կերպով թույլ տալ բացառապես իր կողմից իրականացվող ապահովագրական միջնորդային գործունեության հետ կապված՝ Ապահովագրողի, նրա աուդիտն անցկացնող անձի, ՀՀ Կենտրոնական բանկի և «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո» ԻԱՄ /այսուհետ՝ Բյուրո/ /ԱՊՊԱ ոլորտում գործակալի կողմից իրականացվող գործունեության նկատմամբ/ կողմից վերահսկողություն, ստուգումներ, վերստուգումներ, ուսումնասիրություններ իրականացնել իր մոտ և տրամադրել դրա հետ կապված անհրաժեշտ տեղեկություններ,
4.1.8 իր կողմից գործառույթների կատարման ժամանակ բարեխղճորեն վարել Ապահովագարական պայմանագրերի հաշվառում,
4.1.9 բարեխղճորեն իրականացնել ապահովադիրներին բացատրական աշխատանքները (ծրագրերի բացատրական աշխատանքներ, ապահովագրության պայմանների բացատրական աշխատանքներ, հատուցման իրականցման կարգեր և այլն),
4.1.10 իր գործունեության ընթացքում ղեկավարվել սույն պայմանագրով, ՀՀ գործող օրենսդրությամբ, Ապահովագրողի կողմից սահմանված եւ Գործակալին տրամադրված ներքին իրավական ակտերով, «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո» ԻԱՄ կանոններով: ՀՀ օրենսդրությամբ, Ապահովագրողի կողմից սահմանված եւ Գործակալին տրամադրված ներքին իրավական ակտերով, «Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո» ԻԱՄ կանոններով սահմանված իմպերատիվ բնույթ կրող նորմերը գերակայում են սույն պայմանագրի դրույթների նկատմամբ:
4.1.11 պատշաճ կերպով պահպանել եւ սահմանված կարգով եւ դեպքերում օգտագործել ԱՊՊԱ կտրոնները եւ ձեւաթղթերը:
4.1.12 յուրաքանչյուր ձեւաթղթի կորստի համար Ապահովագրողին վճարել տուգանք՝ Ապահովագրողի կողմից հաստատված եւ Գործակալին տրամադրված աշխատանքային հրահանգներով հաստատված չափով եւ ժամկետներում: Ընդ որում, ԱՊՊԱ կտրոնի կորստի դեպքում Գործակալը Ապահովագրողին վճարում է 50000 ՀՀ դրամ տուգանք: Ի դեպ, չվերադարձված ԱՊՊԱ կտրոնը /ձեւաթուղթը/ համարվում է կորած, եթե Գործակալն այլ բան չի ապացուցում,
4.1.13 ԱՊՊԱ կտրոնների /ձեւաթղթերի/ կորելու, հափշտակելու կամ ոչնչացվելու մասին անհապաղ գրավոր տեղեկացնել Ապահովագրողին՝ նշելով այդ կտրոնների համարները եւ դրանց կորստի, հափշտակման կամ ոչնչացման հանգամանքները,
4.1.14 Առնվազն 15 օրը մեկ Ապահովագրողի հետ կազմել իր մոտ առկա ԱՊՊԱ կտրոնների եւ ԱՊՊԱ պայմանագրերի ձեւաթղթերի մնացորդների վերաբերյալ ակտ,
4.1.15 Ապահովագրողին հանձնել վնասված /խոտանված/ ձեւաթղթերը,
4.1.16 Գովազդային նյութեր հրապարակելիս կամ կատարելիս /ներառյալ այլ անձանց հետ համագործակցելով/ ձեռնպահ մնալ այդ գովազդային նյութերում պարունակվող ԱՊՊԱ պայմանագրի գծով ապահովագրավճարների որեւէ զեղչերի կամ ԱՊՊԱ պայմանագրի կնքմամբ պայմանավորված Ապահովագրողի կամ որեւէ այլ անձի կողմից ԱՊՊԱ-ի հետ չկապված լրացուցիչ ծառայությունների կամ ապրանքների /նվերների/ տրամադրման կամ

տրամադրվող ծառայությունների /վաճառվող ապրանքների/ գծով զեղչերի կիրառման ցանկացած բնույթի խոստումներ տալուց կամ դրանցով ուղեկցվելուց,

4.1.17 Աջակցել Բյուրոյին ԱՊՊԱ ոլորտում Գործակալի կողմից իրականացվող գործունեության նկատմամբ Բյուրոյի կանոններով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու հարցում,

4.1.18 Յուրաքանչյուր ԱՊՊԱ պայմանագրի հետ տրամադրել տվյալ պահին իրենց մոտ առկա հերթական համարի /համարների/ ԱՊՊԱ կտրոնը /կտրոնները/,

4.1.19 Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված այլ պարտավորություններ:

4.2.Ի լրումն Պայմանագրի 4.1 կետում սահմանված պարտավորությունների, Գործակալը պարտավոր է նաև կատարել «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 102-րդ հոդվածով սահմանված գործողությունները, այդ թվում՝

4.2.1. հաճախորդին հայտնել իր հասցեն և հեռախոսահամարը,

4.2.2. հաճախորդին հայտնել, որ ինքը գործում է որպես ապահովագրական գործակալ,

4.2.3. հաճախորդին համապատասխան փաստաթղթով հավաստել, որ ինքը գրանցված է ապահովագրական գործակալների ռեգիստրում, ինչպես նաև տեղեկացնել ռեգիստրում կատարված գրառումներն ապահովադրի կողմից ստուգելու իրավունքի մասին,

4.2.4. հաճախորդին տեղեկացնել, որ հանդես է գալիս Ապահովագրողի անունից,

4.2.5. հաճախորդին հայտնել ապահովագրության այն դասերի վերաբերյալ, որոնց գծով Ապահովագրողը Գործակալին տվել է ապահովագրական միջնորդություն իրականացնելու լիազորություններ,

4.2.6. հաճախորդին Ապահովագրության պայմանագիր կնքելու առաջարկ անել,

4.2.7. հաճախորդին ներկայացնել Ապահովագրության պայմանագրի բոլոր պայմանները, մասնավորապես ապահովագրավճարների չափը, պայմանագրի սահմանափակումները և այլն,

4.2.8. հաճախորդին ներկայացնել ապահովագրական պատահարի առաջացման դեպքում ապահովագրական հատուցման կարգն ու պայմանները,

4.2.9. իրականացնել ՀՀ Կենտրոնական Բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ պահանջներ:

4.3.Ապահովագրողի կողմից Պայմանագրով Գործակալին պատվիրակված գործառույթները Գործակալի կողմից պետք է իրականացվեն բարեխղճորեն, ընդ որում բարեխղճության չափանիշներ են հանդիսանում Գործակալի կողմից Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պարտականությունների ժամանակին և ամբողջությամբ կատարումը:

4.4.Ի լրումն Պայմանագրի 4.5.4. կետով սահմանված վնասների հատուցման Ապահովագրողի պարտականությանը, Գործակալը պարտավորվում է հատուցել Ապահովագրողին պատճառված այն վնասները, որոնք, մասնավորապես, առաջացել են՝

4.4.1.Գործակալի մասնագիտական անփութության հետևանքով Ապահովագրողի կողմից ապահովադիրներին, ապահովագրված անձանց և շահառուներին պատճառված վնասների հատուցման հետևանքով,

4.4.2.Ապահովագրողի անունից Պայմանագրով, կամ նրանով սահմանված կարգով չպատվիրակված գործառույթների իրականացման հետևանքով,

4.4.3.այնպիսի Ապահովագրության պայմանագրերի կնքման հետևանքով, որոնք չեն համապատասխանում Ապահովագրողի կողմից սահմանված ձևին և բովանդակությանը և/կամ Պայմանագրով սահմանված այլ պայմաններին,

4.4.4.որևէ այլ գործողության հետևանքով, որը կարող է հանգեցնել Ապահովագրողին վնաս պատճառելուն և/կամ Ապահովագրողի գործարար համբավի արատավորմանը:

4.5.Ապահովագրողը պարտավոր է՝

4.5.1.Գործակալին տրամադրել Ապահովագրության պայմանագրերի կնքման համար անհրաժեշտ նյութերը,

4.5.2.Պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետներում Գործակալին վճարել միջնորդավճարը,

4.5.3.Գործակալին պատվիրակված գործառույթների իրականացման նկատմամբ իրականացնել վերահսկողություն: Ընդ որում վերահսկողությունը Ապահովագրողի կողմից պետք է իրականացվի ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան մեկ անգամ յուրաքանչյուր եռամսյակի ընթացքում, որի ընթացքում ստուգվում է Գործակալության իրականացման հետ կապված ցանկացած տեղեկատվություն և գործողություն:

4.5.4.ստանձնել սույն պայմանագրով սահմանված գործառույթներից բխող Գործակալի մասնագիտական անփութության հետևանքով ապահովադիրներին, ապահովագրված անձանց և շահառուներին պատճառված վնասների հատուցման պարտականությունը՝ 2.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամի չափով՝ մեկ տարվա ընթացքում բոլոր ապահովագրական պատահարների համար:

4.5.5.Կրել Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ պարտականություններ

5.ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1.Գործակալը, համաձայն Պայմանագրի, վարում է Գործակալության իրականացման ընթացքում ստացված ապահովագրավճարների գումարների առանձնացված հաշվառում:

5.2.Պայմանագրով իրականացված Գործակալության դիմաց Ապահովագրողը Գործակալին վճարում է միջնորդավճար՝ Գործակալի միջոցով կնքված յուրաքանչյուր Ապահովագրության պայմանագրի/վկայագրի համար, յուրաքանչյուր ապահովագրության պայմանագրով/վկայագրով սահմանված ապահովագրավճարի առավելագույնը 35%-ի չափով, բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագրի/վկայագրի կնքման դեպքերից, որի դեպքում միջնորդավճարը կազմում է առավելագույնը 15%:

5.3.Ապահովագրողի հաշվարկային հաշվին կամ կանխիկ կերպով ապահովագրավճարների գումարները Գործակալի կողմից փոխանցվում են սույն պայմանագրով նախատեսված կարգով, ընդ որում փոխանցվող ապահովագրավճարների գումարը նվազեցվում է սույն պայմանագրի 5.2. կետի համաձայն հաշվարկված միջնորդավճարների չափերով, իսկ այդպիսի նվազեցումը սույն պայմանագրի իմաստով համարվում է Ապահովագրողի կողմից Գործակալին միջնորդավճարների վճարման պարտավորության պատշաճ կատարում: Միջնորդավճարի վճարումը կատարվում է ըստ Ապահովագրողի աշխատանքային հրահանգների, որոնց հետ Ապահովագրողը պատշաճ կարգով եւ ստորագրությամբ ծանոթացնում է Գործակալին:

5.4.Ապահովագրության պայմանագրի/վկայագրի վաղաժամկետ դադարեցման հետևանքով ապահովադրին վերջինիս կողմից վճարված ապահովագրավճարը վերադարձնելու դեպքում, Գործակալն, Ապահովագրողի պահանջով, Ապահովագրողին է վերադարձնում Ապահովագրողից ստացված միջնորդավճարի մասը՝ ապահովագրության պայմանագրով/վկայագրով նշված ժամկետի չօգտագործված հատվածի և ընդհանուր ապահովագրության ժամկետի համամասնությամբ:

5.5.Ապահովագրավճարի տարաժամկետ վճարում նախատեսող ապահովագրության պայմանագրի/վկայագրի կնքմանը միջնորդելու դեպքում, Գործակալը կարող է միջնորդավճարը ստանալ նույնպես տարաժամկետ կարգով՝ ապահովագրավճարի յուրաքանչյուր հերթական վճարումից հետո՝ վճարված մասնաբաժնին համապատասխան:

5.6.Կողմերի միջև եղած բոլոր վերը նշված հաշվարկներն, ինչպես նաև վճարումները, կատարվում են Հայաստանի Հանրապետության արժույթով և սույն պայմանագրի, փոխադարձ հաշվարկների ակտի հիման վրա:

6.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Սույն պայմանագրի շրջանակներում վեճերի և տարաձայնությունների առաջացման դեպքում կողմերը կձեռնարկեն բոլոր միջոցները դրանք բանակցությունների միջոցով կարգավորելու համար:

6.2. Սույն պայմանագրից բխող Կողմերի միջև չկարգավորվող հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

7. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

7.1.Կողմերը պարտավորվում են պահպանել սույն պայմանագրի շրջանակներում միմյանց, ինչպես նաև Ապահովադիրների, Ապահովագրված անձանց և/կամ Շահառուների մասին իրենց հայտնի դարձած տեղեկությունների գաղտնիությունը և պարտավորվում են զերծ մնալ երրորդ անձանց որևէ կերպ (ուղղակի կամ անուղղակի) այդպիսի տեղեկությունները տրամադրելուց և/կամ հասանելի դարձնելուց, ինչպես նաև ի շահ իրենց և/կամ երրորդ անձանց այն օգտագործելուց, բացառությամբ այն դեպքերի, եթե նման տեղեկությունների տրամադրումը պահանջվում է օրենքով, այդ թվում, եթե անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության պետական և/կամ կարգավորող մարմիններ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների, հաշվարկների և տեղեկությունների ներկայացման համար:

7.2.Կողմերը սույն պայմանագրի կատարման կապակցությամբ իրենց հայտնի դարձած ապահովագրական, առևտրային և/կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների ապօրինի հրապարակման համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

8.1.Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գործակալին ՀՀ Կենտրոնական բանկի ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառելու պահից և գործում է անժամկետ:

8.2.Պայմանագիրը կարող է միակողմանի դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին առնվազն 10 (տաս) օր առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցելու միջոցով:

8.3.Պայմանագրի 8.2 կետի համաձայն Պայմանագրի միակողմանի դադարեցումը չի ազատում Կողմերին մինչև Պայմանագրի դադարեցումը ծագած պարտավորությունների կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի համաձայնությամբ:

8.4.Պայմանագրի գործողությունը համարվում է դադարած նաև Գործակալին ՀՀ Կենտրոնական Բանկի ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառումից հանելու, Ապահովագրողի ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված այլ դեպքերում:

8.5.Պայմանագիրը դադարելու դեպքում Կողմերը պարտավոր են Ապահովագրության պայմանագրերի, Ապահովագրողի անունից Գործակալի կողմից հավաքագրված ապահովագրավճարների և Ապահովագրողի կողմից Գործակալին վճարման ենթակա միջնորդավճարների վերահաշվարկ կատարել՝ այդ մասին կազմելով համապատասխան գրավոր ակտ:

9.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1.Սույն պայմանագիրը կազմված է և կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ:

9.2.Սույն պայմանագրի ներքո նամակագրությունը կարող է իրականացվել Կողմերի էլեկտրոնային հասցեներով, կամ ֆաքսիմիլով, կամ փոստային հասցեով փաստաթղթերի ուղարկմամբ, բացառությամբ բնօրինակ Ձևաթղթերի, Վկայագրերի, Պայմանագրերի, ապահովագրության պայմանների և սակագների, որոնք պետք է հանձնվեն հասցեատիրոջը կամ պատվիրված նամակով, կամ առձեռն առաքիչի միջոցով:

9.3.Սույն պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները Կողմերի միջև ձևակերպվում են գրավոր, 2 իրավաբանական ուժ ունեցող օրինակից՝ առանձին փաստաթուղթ կազմելով, որոնք հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

9.4.Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը գտնվում է Ապահովագրողի մոտ, մյուսը՝ Գործակալի:

10.ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ
«ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
Լիցենզիա՝ ԱՊՈ թիվ 0009
Գրանցման համար՝ 11
Գրանցման վկայական՝ 11
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա 1,
ՀՎՀՀ 02589581
h/h 1570003731650100
«Ամերիաբանկ» ՓԲԸ

ԳՈՐԾԱԿԱԼ
«ԳԱՐԱՆՏ ԱՍԻՍՏԱՆՍ» ՍՊԸ
Գրանցման համար՝ 264.110.80054
Գրանցման վկայական՝ 03 Ա 230054
Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երեւան, Մամիկոնյանց 30
ՀՎՀՀ՝ 00112491
h/h 1930042301500100
«Կոնվերս բանկ» ՓԲԸ

Գործադիր տնօրեն՝

/Գագիկ Գրիգորյան

Կ.Տ

Տնօրեն՝

/Լիա Անդրիասյան

Կ.Տ